

ըրն չմարթացեալ վայելել, զթերին ընու-
 զօրութեամբն զոր կարաց գրաւել ան-
 ձին: Ուստի վազրն առաւել երկիւղալի
 դտանի քան զառիւծ: Սմա յաճախ 'ի
 մոռացօնս անկանի թէ թագաւոր է,
 այս է հզօրագոյն քան զքնաւս 'ի կեն-
 դանեաց. գնայ հանդարտաբայլ և չյար-
 ձակի 'ի վերայ ուրուք եթէ չդրդիցի
 նախ 'ի նմանէ. ոչ ճեպեցուցանէ ըզ-
 քայլան, չասպատակէ յորս՝ բայց իբրև
 քաղցն նեղեացէ զանձն նորա: Սմին
 հակառակ վազրն թէպէտ և յագի 'ի
 մոյ, բայց միշտ ծարաւի թուի արեան:
 Չիք նմա պարապ 'ի գազանութենէ բայց
 յորժամ պատրաստիցի 'ի դարանակա-
 լութիւն. յափշտակէ և պատտռէ ըզ-
 նոր աւարն նովին կատարութեամբ ու-
 ըրով նախ վարեցաւ, և ոչ թէ բաւակա-
 նանայ պատառելով զառաջինն. յաւեր
 և ամայի կացուցանէ զերկիրն յորում
 բնակի. ոչ ակն առնու յերեսաց և ոչ
 ահաբեկի 'ի զինուց մարդկան. խող-
 խողէ, աւարէ զերամս ընդել կենդա-
 նեաց, սպանանէ զանընդեան, յափըշ-
 տակէ զթոժիւնս փղաց և զմատաղ ուրն
 զեղջիւրս, մերթ յանդգնի ևս և խիզա-
 խէ ընդդէմ առիւծու:

Չև մարմնոցն ընդհանրապէս զոյգ
 ընթանայ ընդ բնութեանն: Առիւծ ազ-
 նուական է կերպարանք, բարձրու-
 թիւն ազդերցն համեմատ ընդ երկայ-
 նութեան մարմնոյն. յորդութիւն թան-
 ձրախիտ բաշիցն քօղարկեալ զուսն,
 հովանի ածէ երեսացն, աներկեան հա-
 յեցուած աչացն և ծանր գնացքն, գոգ-
 ցես համօրէն յայտ իմն առնեն զնորա
 զյանձնապատան և զմեծաշուք քա-
 ջարտութիւն: Վազրն երկայնադէզ
 իրանաւն և ամենեկին ցածագոյն զբար-
 ձիւքն իւրովք, զլուխն հօլանի, աչքն
 դաժան, լեզուն արիւնեանգ, միշտ ար-
 տաքս քան զբերանն ձգեալ, յայտնի
 ցուցանէ զի է վատ եղեռնագործ և ան-
 յազ յանագործութեան, և բնածին իմն
 է 'ի նմա զայրոյթ մշտնջեան և ցասումն
 կոյր, որ ոչ ճանաչէ և ոչ խտրէ ինչ,
 այս է որ դրդէ զինքն յաճախ զորդիսն
 առգամ անյազ լափել և պատառել ևս

և զմայր նոյն 'ի կամել նորա պաշտ-
 պանել զնոսին: Երանի թէ տարապայ-
 ման իմն լինէր 'ի նմա այդ ծարաւ ա-
 ըեան և շիջուցանէր զայն անդատին
 'ի ծննդենէն բարձեալ բնաջինջ զող-
 ջոյն զհրէշիցն ազգ՝ յիւրմէ սերելոց:

Պ Ի Գ Ո Ն

Ապտոշլախնեան Եղբարք 'ի Կ.Պօլիս.

Ազգային յառաջադիմութիւնը մէկ
 տարր մը միայն չունի, անձուկ սահմա-
 նի մէջ բովանդակուած չէ. բարոյակա-
 նի, գիտութեանց, դպրութիւններու և
 գեղարուեստից սահմանները իրեն են.
 և սոսնցմէ որուն մէջ ալ աշխատի, ու-
 ըուն մէջ ալ քաջ հանդիսանայ, միշտ
 գովելի է և օգտակար: Երբոր ազգային
 մը ո՛ր և իցէ յառաջադիմութեամբ յի-
 շել տայ իր ազգին անունը օտարներու
 առջև, արժան է հրապարակեալ գո-
 վեստով մը խրախուսել այնպիսւոյն ազ-
 գասիրութիւնը. որովհետև ազգայնոց
 անտարբերութիւնը կրնայ շատ անգամ
 մարել ազգասիրաց եռանդը:

Ուրախ սրտիւ այս շնորհակալու-
 թեան պարտքը կը մատուցանենք Օ-
 րագրիս միջոցաւ պատուական Ապտու-
 լահեան Եղբարց Կ.Պօլսոյ, որ անխոնջ
 ջանիք, ուշադիր յարատուութեամբ և
 հանճարեղ գործունէութեամբ՝ ետևէ
 եղան լուսանկարի՝ ամենեկին չխնայե-
 լով ծախքի. արուեստին զարգացմանը
 փոյթ տարին, և քանի մը տարուան
 մէջ այնչափ յառաջացուցին արուեստ-
 նին, որ պատուաւոր անուն մը ստա-
 ցան իրենց, և հասարակաց համար
 մուկը վարձատրեց իրենց աշխատու-
 թիւնը: Այսօրուան օրս կրնանք հա-
 մարձակութեամբ ըսել, և ոչ դժ կար-
 ծեմ սուտ կը հանէ զմեզ, որ այս վեր-
 ջին երկու տարիներուս մէջ մեծ կա-
 տարելութեան հասուցած են լուսա-

նկարը, որչափ որ արուեստին հիմակուան հանգամանքները կը ներեն, և դուցէ Եւրոպայի լուսանկարի անուանի արուեստանոցներէն վար չեն մնար: Ազգերնուս մէջ առաջին անգամ այս արուեստին զարգացուցիչներն իրենք ըլլալով, ազգային յիշատակներու մէջ պէտք է չմոռցուի բնաւ անուանին: Ապտուլլահեան եղբարց մեծ արդիւնքն ալ ան սեպելու է, որ Եւրոպայէն հեռու ըլլալով և հետևաբար լուսանկարին ամենօրեայ կատարելագործութիւնը չտեսնելով և անմիջական հաղորդակցութիւն չունենալով միշտ Եւրոպացի բնալոյծներու և լուսանկարիչներու հետ, մեծապէս դժուարին էր իրենց՝ արևելքի մէջ յառաջացնել այդ արուեստը, նիւթական դժուարութիւնն ալ պակաս չէր, որովհետև ամեն պէտք եղած նիւթերը դրսէն բերել տալու բռնադատուած էին, որով աւելի թանկագին կ'ըլլար իրենց:

Հաւասարապէս քաջ են դէմքի, շէնքերու և տեսարաններու. հիմա Կ.Պօլսոյ ամենէն աւելի յաճախեալն է իրենց արուեստանոցը, և ամեն օր բազմաթիւ Եւրոպացի օտարականներ ալ կու գան դէմքերնին լուսով հանել տալու: Իրենց պատկերներուն գլխաւոր յատկութիւնն է շուքերուն փափկութիւնը, որ ամենադժուարին մասն է. գոյնի անուշութիւնը, և դէմքերու պայծառութիւնն ու բնականութիւնը: 51 հարիւրորդամէդը լայնութեամբ և 62 հարիւրորդամէդը երկայնութեամբ ապակւոյ վրայ դէմքեր կը հանեն պրանչելի ճշդութեամբ: Եւրոպայի մէջ հազիւ երկու իրեք լուսանկարիչներ կան, որ այդ մեծութեամբ կարենան հանել առանց բծի: Վեհափառ Սուլթանին Ապտիւ Ազիզ Խանին կերպարանքը հանեցին այդ մեծութեամբ Նիկոմիդիոյ (Իզնի-միտու) պալատին մէջ. և անանկ հաճեցաւ Ինքնակալը, որ իր լուսանկարիչները անուանեց զիրենք, և հրամայեց որ Ապտուլլահեանց հանածը միայն սեպուլի իր բնիկ դէմքը: Անպակաս են ուրիշ նշանաւոր անձիւնքներու ամենա-

գեղեցիկ լուսանկարներ, ինչպէս Ապտիւլ-Քատըր Իշխանինը, Ռիսդորի եւրոպացի անուանի դերասանուհւոյն, որ 1865ին ձմեռը 'ի Պօլիս եկած ըլլալով թատրոնական տեսարաններ տալու, այլ և այլ դրբով հանել տուաւ իր դէմքը Ապտուլլահեանց արուեստանոցը: Ունեցած բազմաթիւ ընտիր տեսարաններնուն մէջ շատ գեղեցիկ են Կ.Պօլսոյ ընդհանուր տեսքը՝ մեծադիր երկու ապակիով բարձրէն տեսնուած. Իզմիր քաղաքին ընդհանուր տեսքը՝ ուր հիմա արուեստանոց մը հաստատեցին, հինգ եղբարցմէ երկուքը հոն փոխադրուելով, և Եփեսոսի աւերակները: Հիմա կը պատրաստեն ուրիշ նոր մեծագոյն տեսք մը Կ.Պօլսոյ՝ չորս ապակիով, որ յուսացուի թէ այս դարնան լմրնայ և հիմակուրնէ կը խոստանայ պատիւ ընելու իրենց: — Ունին նաև փոքրադիր ճոխ հաւաքմունք մը արևելեան դէմքերու, զգեստներու և մանաւանդ ամեն ցեղ արուեստաւորներու, որ իրենց կերպ կերպ հազուատներովն ու արուեստներու կերպ կերպ գործիքներովը շատ հաճոյական են և հետաքննական, և մասնաւորապէս Եւրոպացւոց շատ ախորժելի, որ արևելեան սովորութեանց մեծապէս սիրող են:

Ջարմանալի է Եւրոպացւոց ցրցուցած համարմունքն ու համակրութիւնը Ապտուլլահեան եղբարց վրայ, որոնք իրենց ամենօրեայ գովեստներովը կը հաստատեն մեր ըսածներուն ճշմարտութիւնը: Անգղիացիք հրապարակաւ ալ գովեստ մը տուին, որ արժանի է հոս յիշատակուելու: Ի Կ.Պօլիս Անգղիացւոց համար բացուելիք նոր ընթերցարանին քանի մը լուսանկար ընծայ ըրած էին Ապտուլլահեան եղբարք. ընթերցարանին բացման օրը հրաւիրուեցաւ հանդիսին Պ. Վիչէն Ապտուլլահեան, տեսուչ արուեստանոցին, հոն 'ի ներկայութեան Անգղիոյ նոր դեսպանին, Լօրտ Լայընսի, երկու բանախօսութեանց մէջ մասնաւոր գովեստով յիշատակուեցան Ապտուլլահեան եղբարք, և երրորդ բանախօսութիւն մըն ալ՝ միայն իրենց գո-

վեստովը շարագրուած էր: Ծափահա-
րութեամբ ընդունուեցան հանդիսա-
կաններէն այս գովեստները, և դեսպա-
նը ուրախակից եղաւ Պ. Վիշնին:

Անտարակոյս ենք որ օրէ օր աւելի
պիտի ճոխացընեն Ապտուլահան եղ-
բարբ իրենց տեսարաններուն հաւաք-
մունքը Կ.Պոլսոյ ամեն նշանաւոր տե-
ղերուն, շէնքերուն ու դիրքերուն լու-
սանկարովը:

Պ. Վիշնի շատ ճարտար է նաև 'ի
մանրանկարի¹, և բաց 'ի ուրիշ դէմքե-
րէ՝ երկու իրեք անգամ վեհափառ ինք-
նակալին մանրանկար դէմքը գծած է
մեծաւ գովութեամբ:

Կը կնքենք խօսքերնիս, վերջին ան-
գամ մին ալ, յայտնելով մեր ուրա-
խութիւնը՝ միանգամայն խրախոյս տա-
լով իրենց ազգասիրութեանը. և կ'ա-
պահովցնենք զիրենք որ Ապտուլահան
եղբարց անունը լուսանկարի հետ մէկ-
տեղ միշտ պիտի յիշուի գովեստով մեր
ազգին մէջ:

Մարկոս Աբրեյիոս կայսեր յանդիմա-
նոսքիւնն որ իր փառախոնա կեռոյն
ու Լուկիլոս աղջկանը տոռառ:

Աղկանդ կերպին չեմ հաւնիր, ո՞վ
փաւստինա, և ոչ քու կերպիդ՝ որ իր
մայրը պիտոր ըլլաս: Աղջիկ մը աղէկ
ըլլալու համար՝ պէտք է մօրը հնազանդ
ըլլայ. մայր մըն ալ աղէկ մայր ըլլալու
համար՝ պէտք է աղէկ կրթէ իր աղջի-
կը: Հարկ չկայ որ հայրը խրատէ իր
աղջիկը, երբոր մայրը առաքինի ըլլայ
ու աղջիկը համեստ. ինչպէս մեծ ա-
մօթ է հօր մը՝ որ կ'ինը իր առջին պատ-
ժէ մանչ զաւակը, ասանկ ալ մեծ նա-
խատիւք է մօր մը՝ որ հայրը իր առջին
պատժէ աղջիկ զաւակը: Հոռոգացոց
օրէնքն էր որ հայր մը ամենևին չէր
նայեր իր աղջիկ զաւակները կրթելու,
և ոչ մայր մը իր մանչ զաւակները կրթ-
թելու. անանկ հաստատուն էր աս օ-
րէնքն՝ որ բոլոր ընտանիքը մէկ տեղ

ընակելով՝ կարծես որ հայրը աղջիկ
զաւակ չունէր, մայրն ալ մանչ զաւակ
չունէր: Ո՞վ Հոովմ, չեմ ողբար վրագ-
որ պալատներդ աւրուեր են, պարիսպդ
փլեր է, անտառներդ այրեր են, ընա-
կիչներդ քիչցեր են. ատոնց վրայ չեմ
լար. վասն զի ատենը ինչպէս որ կը
բերէ՝ ասանկ ալ կը տանի ատ բանե-
րը: Այլ կ'ողբամ ու նորէն կ'ողբամ
վրագ՝ տեսնելով դքեզ քու հարցդ ա-
ռաքինութենէն ու անոնց կրթութենէն
զուրկ: Կորաւ լմնցաւ մեր հայրենիքը՝
երբոր մանչ ու աղջիկ զաւակներուն
կրթութիւնը պակսեցաւ. մանչերը լոր-
բացան, աղջիկները ամօթխածութիւնը
մէկդի դրին, ու մայրերը անպարկեշտ
եղան: Վահ վահ. ատենօք հայր մը
քսան մանչ զաւակ, ու մայր մը նոյն
չափ աղջիկ զաւակ կրթելու հերիք էր.
Իսկ հիմայ քսան հայր մէկ մանչ զա-
ւակ մը, ու քսան մայր մէկ աղջիկ զա-
ւակ մը կրթելու չեն համարձակիր:
Ասիկայ քեզի համար ալ կ'ըսեմ, ո՞վ
փաւստինա, որ մայր ըլլալդ մոռցեր ես՝
ու չլայլած համարձակութիւնը կու
տաս աղջկանդ. դուն ալ, ո՞վ Լուկիլա,
աղջիկ զաւակ ըլլալդ մոռցեր ու չվայ-
լած համարձակութիւններ կ'ընես: Աս-
տուածներուն տուած մեծ պարգևը ան
էր հոռոմայեցի խաթուններուն, որ ա-
մօթխած էին ու տնէն ելլել չէին սի-
րեր: Երբոր կնիկները աստուածներէն
վախնալը ու մարդկանցմէ ամաչելը մէկ-
դի դնեն, կամ իրենք աշխարհքիս ետքը
կը բերեն, կամ աշխարհք իրենցը. աշ-
խարհքիս այնչափ հարկաւոր է կնիկնե-
րուն տունը կենալը ու համեստ ըլլալը,
որչափ զօրավարներուն դուրս ելլելը.
ասոնք դուրս ելլելով կը պահեն աշ-
խարհքս, անոնք տունը կենայով: Ետնա
հրաբուլս լեռը այնչափ չիփսասեր Սիկի-
լիացոց, որչափ մէկ անհամեստ կին
մը Հոովմայեցոց. որչափ թագաւորու-
թիւններ կործանեցան, որչափ թագա-
ւորներ կորան կնկան մը պատճառաւ.
աս բանիս ճար ընելու համար որչափ
աշխատանք վտանգ ու զոհեր եղած են:
Կանանց ուրիշ ամեն պակսութիւնները

1 ԳՂ. Miniature.